ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> << Դեկտեմբեր >> 2020թ. N Ա7/208-2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 8՝ <<Վաղարշապատի Հ.Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ակնալիճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Լեռնամերձի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Նորապատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում և <<Ֆերիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2017, 2018, 2019 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշումով նախատեսված աշխատանքներն իրականացնել 24 աշխատանքային օրյա ժամկետում:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Հովհաննիսյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելու պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

23.06.2020

VERIFIED OCSP 23.06.2020 17:33:18 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am